

Գանգալի նոր ջրանցքը :

Սեր դարուս մեծագործ ազգերէն կը սեպուին Նագդիացիք , և յիրաւի ոչ դք կրնայ չզարմանալ անոնց երկայնամտութեանը և հնարագիւտ ճարտարութեանը վրայ՝ որ մեծամեծ ու օգտակար շէնքեր կը կանգնեն առանց ժամանակի ու ծախքի խնայութեան : Եւ յայտնի մեծագործութեան մ'ալ հնդկաստան Վանգէս գետին բացած ջրանցքն է՝ որ դեռ նոր լինցաւ :

Վանգէսի այս նոր ջրանցքը շատ աւելի զարմանալի է քան զՍեսոստրի ըրած ձեռափորները . և Վարեհի հռչակաւոր բացած ջրանցքէն ալ աւելի մեծագործ : Եւ նոր ջրանցքին երկայնութիւնը 1432 հազարամեղր (քիլոմեղր) է . իսկ Վարեհին շինածը 201 հազարամեղր երկայնութիւն ունէր : Վօդլի գնդապետը աս հսկայաձև ու մեծագործ կառուցման տեսուչ կեցաւ . վրան շինուած է 902 մեծ կամուրջ , 297 երկրորդական կամուրջներ , 16 սահանք՝ ջրին այլ և այլ ընթացքն ուղղելու , 21 նաւարկելի ընդունարանք կամ փակարանք ջրոյ , 282 ոռոգման անցքեր և աստիճաններ՝ 16 հազարամեղր երկայնութեամբ տեղւոյ վրայ , որպէս զի տեղացիք կարենան ջուրը մանել , 179 գործարանք նոյն գետին ուղղութեան վրայ շինուած , 6 մեծ գործատուն ջրանցքին նորոգելու կարօտութեան ժամանակ գործածելու :

Նոյր աս բաներուս համար քացած ծախքը , որ տէրութիւնը իր վրան էր առեր , 17 միլիոն ֆրանք եղեր է , և ութ տարուան մէջ այսչափ մեծագործութիւնք 'ի գլուխ հաներ է : Իսկ բերած շահը տարին 3,625,000 ֆրանք է , որ պիտի վճարեն այն ամէն երկրագործ ու կալուածատէր որ աս ջրանցքէն կ'ուզեն ոռոգել երկիրը , և այնչափ հարկաւոր է ասիկայ անոնց անդաստաններուն , որ առաջուց բոլորովին անբեր էին ցամաքութեան պատճառաւ : Տարեկան ծախքը այլ և այլ նորոգութեանց համար կը հաշուեն մէկ միլիոն ֆրանք :

ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քարերու մէջ փակուած ողջ կենդանիք :

Իայց որչափ որ դիւրին է ըմբռնել այս առաջին և ամենապարզ երևոյթս , այնչափ դժուար է հաւատալը կենդանի արջնագորտերուն՝ գիւտը : Եւ սակայն այս բանիս ճշմարտութեան վերաբերեալ պատմական վկայութիւններն այնչափ բազմաթիւ և հաւատարիմ են , և մանաւանդ Վերիկոլայէն սկսեալ ինչուան մեր օրերս շատերը այս բանիս վրայ խօսեր են , որ անոնց ըսածին նայելով ոչ միայն ճշմարիտ է այս բանս այլ նաեւ յաճախեալ : Եւ իսկ Վարեհոս , վեշտասաներորդ դարուն ամենէն երևելի անդամազնինն ու վիրաբուժը կը պատմէ թէ ինքը աչքովը տեսեր է որ քար մը ճեղքելով՝ մէջէն ողջ արջ նագորտ մը ելեր է , և կ'ըսէ թէ երբոր ինքը մեծապէս զարմացած մնացեր էր , քարակոփն ըսեր է որ իրեն համար այս բանս առաջինը չէ , ուրիշ անգամներ ալ տեսեր է : Իայց Վարեհոսի այս պարզ պատմութիւնը , որ թէպէտ վերջէն ալ նոյնպիսի դիպուածներով հաստատուեցաւ , և որոնց յիշատակը ամենայն ինամբով դարէ դար աւանդուեցաւ , չը կրցաւ իմաստնոց խիստ պարանոցը կորացուցանել , որոնք ոչ միայն գործաւորին ըսածին չէին հաւատար , այլ նաեւ մասնաւոր խարդախութիւն կը սեպէին պատմողին կողմանէ , կամ թէ տգիտութենէ առաջ եկած : Եւ արդէն այս պատմութեանց արձագանգը երթալով մարելու վրայ էր , ու գուցէ և ոչ մէյմ'ալ խօսքը պիտի ըլլար , թէ որ նոյն կարգէ դուրս դիպուածը 1851ին չորոգուէր , և այնպիսի հաւատարիմ վկայութեամբ ստուգուած , որ գիտունք ստիպուեցան նոր և մտադիր քննութիւններ ընել այս բանիս վրայ :

Բնական աշխարհի պատմութիւնը : Վաղղիոյ Պլուա քաղաքին շոգեկառաց կայարանին մօտ Պասդոն անունով մէկը ուղեւոր ջրհոր մը խորցունել, կրային հողով խառն խոշոր ու կտր կոպճաքարեր¹ հանել կու տար : Վործաւորներէն մէկը տեսնելով որ այս քարերէն ոմանք աւելի խոշորներու կապած, մանաւանդ թէ անոնց մէջ հագուած են, ձեռքի ուրագովը ուղեց անոնցմէ մէկը կտորել, և երկու հաւասար մաս բաժնեց : Բաւրին արտաքին տեսքը լեցուն ու միապաղաղ կը ցուցնէր . և սակայն մէջէն գիրուկ ու մեծկակ արջնագորտ մը դուրս ցատքեց, որ հոն եղողներէն վախնալով, գուցէ իր նոր էութենէն շփոթած, սկսեր է փախչիլ : Բայց բնութեամբ դանդաղ ըլլալուն, մանաւանդ այն երկար ու բռնական անշարժութենէն, քալելու շատ վարժութիւն չունէր, ուստի մէկէն գործաւորները զինքը բռնեցին, որոնք այս նոր դիպուածէս ապշած մնացեր էին, ու փոխանակ սպաննելու զանիկայ, ինչպէս շատ անգամ սովորութիւն է այսպիսի տգէտ մարդկանց, առին կամացուկ մը նորէն քարին խոռոչին մէջ դրին տեղաւորեցին : Կենդանին հագիւ թէ իր բնական րանը մօտէր էր, կրցածին չափ ինքն իրեն տեղաւորեցաւ, բոլոր խոռոչը լեցունելով, որն որ կարծես թէ իր վրայ ձեւած ու կաղապարած ըլլար . ետքը գործաւորները քարին մէկալ կտորն ալ վրան դնելով լաւ մը գոցեցին, իբր թէ մէկ տուփ մ'ըլլար, և մէկ անկիւն մը ձգելով՝ վրան թիզէն աւելի հող լեցուցին : Եւ ինչպէս հոս մէկիկ մէկիկ պատմել թէ ինչ բաներ անցան այն մենակեաց արջնագորտին գլխէն, թէ ինչպէս անփոյթ Պասդոնին ձեռքէն Սաթոնէ առնուով մտադիր մէկու մը ձեռքն անցաւ .

և թէ անիկայ ալ ինչպէս իր երկրին գիտութեանց ճեմարանին յանձնեց, անկէ ալ ամենայն ստոյգ տեղեկութիւններով՝ Բարիզու գիտութեանց ճեմարանին անցաւ : Եւ իայն այսչափ բաւական ըլլայ գիտնալ որ ջրհորը, ուսկից որ այն քարը ելեր էր, քսան մեղր խորութիւն ունէր, և մօտի լճակի մը երեսէն երկու մեղր վար բարեհամ ջուր մը կը բղխէր, և թէ այն քարը յատկապէս կաւային խաւին կը պատշաճէր, որուն մէջ որ գտուեցաւ, և թէ անիկայ գալախազային արծուէքար՝ մընէր, կրային հողաքարով² լեցուած, որուն մէջ արջնագորտը կծկած կեցեր էր :

Իմէ կենդանին և թէ իր քարեղէն բնակարանը Տիւմերիլ և Սաթանտի երևելի բնապատումներուն յանձնուեցան, որոնք ամէն բանէ առաջ քննեցին թէ արդեօք իրաւցնէ արջնագորտին քարի մէջ գտուելուն բաւական ստոյգ վկայութիւններ կ'ան որ մարդուս միտքը հանդարտեցնեն խարդախութիւն մը չըլլալուն : Բայ բանիս բաւական ստուգութիւն չտեսան այն անաչառ դատաւորները : Պլուայի ճեմարանին վկայութիւնը, որ գործաւորի մը ըսածները կը հաստատէր, բաւական չտեպեցին, և որ և իցէ դիպուած մը այսպիսի վկայութեամբ, թէպէտև ճեմարտանման ալ ըլլայ, իրաւունք չկրնար ստանալ գիտութեանց կարգն անցնելու : Եւ սակայն կենդանին թէ ըստ երկայնութեան և թէ ըստ լայնութեան՝ քարին խոռոչը ամբողջ կը բռնէր . միայն կռնրկին կողմը դատարկ պզտի միջոց մը կար, վասն զի քարն աւելի կոր էր քան զկենդանւոյն կռնակը . անդամներն աղէկ տեղաւորուած չէին, այլ քիչ մը կծկած . զլուսին այնպէս հանգչած էր, որ ծամելիքները գոյ ու անշարժ կը մնային, և ինչպէս ըսինք, երբոր ծակին մէջ կը դրուէր, անիկայ ըստ իւր հին սովորութեանը առաջին դիրքը կ'առնուր և անփնաս ու աներկիւղ կը թողուր որ վրան գոցէն :

¹ Bibliot. Univ. de Genève. Août 1851. Sciences physiques, p. 337.

Sur un crapaud trouvé vivant dans la cavité d'un gros silex, où il paraît avoir séjourné pendant long-temps. Comptes rendus de l'Académie des sciences du 21 juillet et du 4 août 1851.

² SX. 2-4 ԸԼ Բ-ԸԼ :

¹ Գ. Գ. Géode siliceuse. ² Գ. Գ. Tuf calcaire.

Իւելի ծանր պարագայ մը դիտեց խո-
րազներն Տիւմէրիւ . կենդանւոյն դիրքն
արծուէքարին մէջ անփոփոխելի էր .
ծամեւիքները աղէկ մը գոցուած և կը-
րային հողաքարին մէջ խրած աղեղնա-
ձև կը բարձրանային կակուղ մորթէն
ու ճկուն կոկորդէն դուրս : Իսկէ քա-
րային նիւթոյն կամաց կամաց նստելովը
պատճառած շարունակ և հետզհետէ
աճող ճնշումը բարակ ճեղքուած մը
բացեր էր ծամեւեաց այս աղեղան վրայ,
և բոլորած անցք մը ձևացուցեր էր ,
ու այն նիւթը մէջը գնացեր նստեր էր :
Ի՞նչ այս ամէն պարագաները իրին
ճշմարտութիւնը կը ցուցնէին , և կը
բռնադատէին անոր ստուգութեանն
հաւաքը ընծայել , մանաւանդ այս վեր-
ջինս . վասն զի անկարելի է խարդախու-
թեամբ գործարանաւոր հաստատուն
մասի մը այսպիսի հանգամանք տալ :

Իայց ափսոս որ քարը չխորտակելու
փափաքը այն երկու հետաքնին բնախօ-
սից ձեռքը բռներ է որ չկտրեն , որով
չկրցան աւելի ստոյգ տեղեկութիւն մը
առնուլ քարին ներքին կազմութեանն
ու մակերեւութին վրայ , ուսկից լոյս մը
կրնար ծագել այս բանիս սկիզբը գրտ-
նելու , և իմանալու թէ արդեօք բա-
ցուածք մը , ճեղք մը կամ բարակ անցք
մը կային քարին մէջ ո՞ր կամ ջուր մըտ-
նելու : Ի վերայ այս ամենայնի այն եր-
կու գիտնականներուն ըրած քննու-
թիւնները բաւական են ցուցնելու թէ
այն արջնագորտը երկար ժամանակ
բանտարկեալ կեցեր էր նոյն քարին
մէջ . և մանաւանդ համոզելու թէ այս
բանս ոչ միայն կարելի է այլ և իրաւ :

Եւ ինչ պատճառ կայ անըմբռնելի ու
անհաւատարի սեպելու այս բանս . միթէ
այն անհիմն կարծիքը թէ արջնագորտը
յառաջ քան զգայլախաղային քարին
ձևանալը եղած ըլլայ , որով անհնարին
ծեր կ'ըլլայ , չէ նէ միւս անհիմն կար-
ծիքը թէ նոյնպիսի գայլախաղային ար-
ծուէքար մը մեր օրը չկրնար ձևացած
ըլլալ , և թէ դժուարին է ըմբռնելը
ինչպէս էութիւն մը առանց կենաց սո-
վորական ու հարկաւոր պիտոյիցը կարե-

նայ ապրիլ : Իայց ուլ որ քիչ մը ուշի
ուշով ամէն բան կը քննէ , զարմանքն
երթալով կը նուազի . վասն զի զար-
մանքը , որ սակաւագիւտ տուրք մըն է ,
չատ անգամ սրամտութեան ու գիտու-
թեան հետ խոտոր համեմատութիւն
ունի . որոնք միայն լոյս կրնան տալ այս
երեւոյթս քննելու : Արային հողաքարը ,
որ այն քարին կենդրոնական մասը կը
կազմէր , և որուն մէջն էր արջնագոր-
տը , չէր կրնար իբրև կրտսեր ժամա-
նակաւ , յառաջ քան զգայլախաղային
կեղևն ըլլալ . ուրեմն այն արծուէքարը
դատարկ ու ծակ էր երբոր վերագոյն
խաւերը փորուելով ջրհորին յատակը
ելաւ : Հիմա կրնանք երևակայել որ
արծուէքարին ծակէն ջրհորին կամ
մօտաւոր լճակին կրաքեր ջրոյն հետ
մէկտեղ արջնագորտին հաւկիթն ալ
մէջն մտած ըլլայ , որն որ մէյ մը մտնե-
լէն ետև հոն մնացած . իսկ ջուրը իր
մէջը լուծուած կրի ածխուտը կամաց
կամաց ազատ թողլով՝ այն դատարկու-
թիւնը կը լեցնէ ու մուտքը կը գոցէ :
Իսկ արջնագորտը այն տղմոյն մէջ , որ
իւր բնական տարրն է , կ'աճի կը մեծ-
նայ ծծելով ու իւրացուցանելով հոն
մնացած քիչ մը ջուրը և անոր տեղը
բռնելով՝ բոլորովին հողաքարին մէջ կը
փակուի , որ կամաց կամաց կը չորնայ ու
կը պնդանայ : Իհաւաստի այս կերպով
արջնագորտը կը փակուի ու կը բանտուի
այն գայլախաղային քարին մէջ , որ քսան
մեղր խորութեամբ խաւի մը կը վերա-
բերի . ուստի հարկ մը չկայ Սաթուսա-
ղային տարիքն հարիւրապատկել և այն
մեծարոյ կենդանին մինչև ժամանակաց
սկիզբն հանել ու երկրիս հետ հասա-
կակից դնել :

Իսկ թէ ինչպէս առանց օդոյ և ջրոյ
այն քարին մէջ կենդանին անշարժ ողջ
կրնայ մնալ , ասիկայ այնպիսի գաղտնիք
մըն է որուն համոզողական մեկնութիւն
մը գտնելը դժուարին է : Իայց որով-
հետև այս բանիս տարակոյս չկայ ,
պէտք է որ իր պատճառն ալ ունենայ ,
և թէ որ հիմակուհիմա չենք կրնար
գտնել նէ , մեր տգիտութենէն է , ոչ

Եթէ այլոց խարդախութենէն կամ
Եթէ զգայարանաց խաբէութենէ : Ի վե-
րոյ այսր ամենայնի կրնանք մէկ երկու
պատճառներ գտնել որ կարող ըլլան
զմեզ համոզել և ունեցած տարակոյսնիս
փարատել : Երկրորդ , ինչպէս նաև գոր-
տերուն , արեան շրջանը կաթնտու
կենդանեաց արեան շրջանին նման չկա-
տարուիր . ասոնց սիրտը կրկնապատիկ
է , այսինքն երկու ականջք՝ և երկու
փորոքք՝ ունի , որ մէկմէկու հետ հա-
ղորդակցութիւն չունին . իսկ անոնց
սիրտը իրաւ երկու ականջք ունին ,
բայց փորոքնին մէկ է . անկատար բաժ-
նուած մսուտ խտրոցով մը , որ սրտին
գլխէն կամ ծայրէն սկսեալ ինչուան
վար չհասնիր , որով այն երկու խորշե-
րը իրարմէ բոլորովին բաժնուած չեն :
Իրաւ է որ գորտերուն վրայ վերջերս ե-
ղած զգուշաւոր կենդանահատութիւն-
ները ցուցրցին ընդդէմ կարծեաց հնոց՝
Եթէ ասոնց սրտի խորշերը Եթէպէտև իրա-
րու հետ հաղորդակցութիւն ունենան ,
կենդանութե՞ն ժամանակ կարմիր արիւ-
նը սև արեան հետ չի խառնուիր . բայց
մահուան թմբուութեան ժամանակ ընդ-
հակառակը կը տեսնենք : Եւ այն ատեն
արեան շրջանը կը դանդաղի , շնչառու-
թիւնը գրեթէ կը կտրի , գործառնու-
թիւնները կը մարին , և սիրտը՝ որ կեն-
դանութեան ժամանակ ուժով մը ամ-
փոփուելով խտրոցին ազատ ստորոտը
կ'երթայ յատակին հետ կը միանայ , և
երկու արեանց միաւորութիւնը կ'արգե-
լու , մահուան թմբուութեան ժամանակ
չկրնար ամփոփուիլ , որով արեանց միա-
ւորութիւնն ալ չարգելուիր : Բայց դի-
տելու բանն այս է որ գորտերուն սրտին
փորոքը և ականջներն , որոնք դէպ 'ի
ձախ սև և դէպ 'ի աջ կարմիր են , մա-
հուան թմբուութեան ժամանակ միա-
դոյն կ'ըլլան . և այս վիճակս , նաև սա-
կաւազիւտ կենդանածնաց վրայ ալ , ո-
րոնց յատուկ է , յառաջ կու գայ , ըստ
գիտողութեանց երևելի անդամազննի
մը , երակային արեան ուղեղին մէջ զեղ-
մունքէն :

1 Գ.Պ. Oreillette.

2 Գ.Պ. Ventricule.

Ուրեմն մահուան թմբուութեան մէջ
ընկած արջնագորտը թթուածնեալ ա-
րեան կամ կարօտ չէ , և կամ Եթէ քիչ
հարկաւորութիւն ունի . որովհետև այս
ազնուական արիւնս աւելի հարկաւոր է
'ի գործունէութեան պահելու գլխոյն
մէջ զգայութեան և շարժման ընդհա-
տական գործառնութիւնները , և ոչ
Եթէ անտնօրինելի է տնկական գործառ-
նութեանց : Ուստի պոչաւոր գորտե-
րուն վրայ , որոնց երկու արիւններն յա-
ռաջ քան զսիրտն հասնելու իրարու
հետ կը խառնուին , դիտուած է որ
Եթէային երակներուն վերագոյն մա-
սէն մէկ անօթ մը կ'երթայ շիտակ գը-
լուխը կը հասնի , որպէս զի զուտ կար-
միր արեամբ ողողէ ջղական դրութեան
այն կենդրոնը : Եւ եթէ այս այսպէս է ,
ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ որ այսպիսի
կենդանեացմէ մէկը իսկ մը ժամանակ
քարի մէջ բանտուած փակուի : Վի-
տենք արդեօք Եթէ ինչուան երբ կրնայ
արգելուիլ Եթէային արեան նորոգու-
թիւնը առանց մահը վրայ հասնելու :
Եւ Եթէ այս կենդանեացս մէկուն շնչափո-
ղը ամուր մը կապենք , կը տեսնենք որ
արեան շրջանը անխռով կը մնայ կէս
ժամէն աւելի . ետքէն կարմիր հոսանքը
կը սևնայ և կենդանին կը սկսի գալա-
րիլ ու տագնապիլ . բայց փորը ճղքելը ,
շնչափողն ամուր կապելը , և անգութ
գիտութեան տուած ուրիշ բիւրաւոր
տանջանքները , միԵթէ գործառնութեց
դաշնակութեանը խանգարումն չեն բե-
րեր : Եւս ալ աւելցրնենք որ սողնոց
բազմաթիւ ցեղին շատ տեսակները ա-
միսներով անշարժ և առանց կերակրոյ
կը կենան , և մեր դիպուածոյն գալով
կենդանին արտաքին գրգիռներ չունե-
նալով , որոնք գործարանաց գործառնու-
թիւնները յարթութեմ և յաշխատու-
թեան կը պահեն ու անոնց մաշումն կը
պատճառեն , սննդեան հարկաւորութի
չունի , որ եղած կորստեան դարման տա-
նի , ոչ սնունդ ճարելու բնական աղդ-
ման , ոչ վերահաս վտանգաց առջևն
առնելու զգայութեան և ոչ անոնցմէ
փախչելու շարժման : Եւ այն ատեն

կեանքն ուրիշ բան չըլլար բայց եթէ
թագուն տնկականութիւն մը :

Այս պատճառաբանութիւններս, ոչ
ի կամս ապաստան այլ հիմնեալ ի գի-
տութեան վերայ, կրնան հաստատու-
թիւն առնուլ փորձառութեանց անյաղ-
թելի տրամաբանութեամբն անգամ:
Այլիւ գիտնականը ճեմարանին կաճա-
ռորդացը կը պատմէր թէ 1822^ն (Վիգ-
դէ բնագիտէն այսպիսի մէկ դիպուած
մը հրատարակուելով, մտածեր է որ
փորձով ալ այս ծանրակշիւ խնդրոյս
լուծումն տայ . ուստի քանի մը արջնա-
գորտ այլ և այլ ամաններու մէջ դրեր
է ու վրանին լուծուած կիր լեցուցեր է,
որ շուտ մը պնդացեր են, և քանի մը
տարի այնպէս թողլէն ետև այն աման-
ներէն մէկը կոտրեր տեսեր է որ արջնա-
գորտը դեռ կենդանի մնացեր է: Բայց
դիտելու բանն այս է որ ոչ երբէք մողէ-
սի կամ օձի դասէն կենդանի մը քարի
մէջ ողջ գտուեր է, և նոյն իսկ գորտե-
րէն ալ այս հրաշալի առանձնաշնորհու-
թիւնս միայն արջնագորտներն ունին:

Կը Հարունակոտի:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Կանոնադր կեանք հիմն առողջութեան¹:

Թէպէտև Աստուած հաշուեց մարդ-
կան օրերը, ու մեր կենացն ալ տէր է,
բայց կրնանք ճշմարտութեամբ նաև ը-
սել որ ձեռքերնիս թողուցած է մեր
կեանքը. զի ինքը ոչ զոք կը խտրէ, ա-
ռաքինութիւնը միայն կը սիրէ, և ով
առաքինի է՝ իրեն բարեկամ կ'ըլլայ:

Պէտք է ուրեմն որ ով որ կ'ուզէ եր-
կար կեանք ունենալ, նախ և առաջ ա-
ռաքինի ըլլայ. մարմնոյ խնամքը ճշը-

¹ Այս ազգարարութիւնները ճենացի իմաստ-
նոյ մը անուամբ գտնուած խրատներէն առեր ենք,
իր ճաշակ նոյն ազգին մտածութեանցն ու կեն-
ցադաւարութեանը:

մարիտ առաքինութեան համար եղա-
ծին հետ միանալով, մարդուս բնու-
թիւնը առողջ ու պնդակազմ կ'ընեն,
որով կեանքն ալ երկար ու երջանիկ:
Այ բանս չորս հիման վրայ կայացած է.

Ա. Պէտք է կանոնաւորէ մարդ իր
սիրտը և անոր իղձերը:

Բ. Կերակրոյ եղանակը:

Գ. ()րական գործողութիւնները:

Դ. Վիշերուան հանգիստը:

Ա. Կանոնադրել զսիրտը և անոր իղձերը:

Արդուս սիրտը այնպէս է ինչպէս
ծառի մը իրեն արմատը, և ինչպէս ա-
ռուակին՝ իրեն սկիզբը. սիրտը ամենուն
կ'իշխէ, և իրմով է որ հոգին և մեր ու-
նեցած հինգ զգայարանքները կանոնի
տակ են, ասոր համար պէտք է որ մենք
սրտերնիս ու անոր իղձերը լաւ քննենք:
Այս բանիս մէջ յաջողելու համար ու-
րիշ բանի մի զբաղիր, բայց եթէ այն-
պիսի մտածմունքներու որ մարդուս ա-
ռաքինութիւն կը սորվեցընեն. միայն քու
յատուկ կատարելութեանդ մի նայիր,
հապա ջանացիր որ քու առաքինութի-
ւերդ օգտակար ու բարի ընծայես:
Թէ որ միտքդ մտածմունք մը կու գայ,
մէկ քանի բան ըսէ մտածածէդ, լաւ մը
վրան անդրադարձութիւն ըրէ և վերջը
հարցուր ինքիրենդ. Այն բանը որ կը
մտածեմ, այս բանս որ կ'ուզեմ ըսել
կամ ընել, օգտակար է թէ ֆնաստակար
ուրիշներուն. թէ որ օգտակար է՝ ըրէ
կամ ըսէ, բայց թէ որ ֆնաստակար է
մի թող տար քեզի այն ախտը, ոչ ըրէ
և ոչ ալ ըսէ: Երբ որ միշտ խաղաղ
բռնէ. երբ որ մէկը իր սրտին մէջ նորա-
նոր գործողութիւններու դիտմունք ու-
նի, ու թէ որ ընկերութեան մէջ կը
մտնայ՝ իր զգացմունքը երեսէն ալ կ'ի-
մացուի, ուրախութիւն մը ու զուար-
թութիւն մը որ իր սրտին մէջ ունի,
ամենուն ալ կը ցուցընէ:

Մտածէ միշտ կենացդ երջանկու-
թեանը վրայ. երջանիկ է այնպիսին
որն որ իր երջանկութիւնը կը ճանչնայ.
Իմինս լաւ իմանալու համար, իմ հան-